

Երևանի պետական համալսարանում գործող
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1)

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Աշոտի Թավադյանի ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ Սիրո Հրաչի Ամիրխանյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձինք՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է հանրային իրավունքի իրավաբանական անձանց: ՀՀ սահմանադրության 2015թ.-ի փոփոխություններով հայկական իրավական համակարգ ներդրվեց «հանրային իրավունքի իրավաբանական անձ» տերմինը: Մասնավորապես, 180-րդ հոդվածի 2-րդ մասում նշվեց՝ «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է»: Նույնը սահմանվեց նաև միջհամայնքային միավորումների դեպքում՝ 189-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանեց, որ «Միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի իրավաբանական անձ է»:

Դրանից հետո տեղի ունեցան փոփոխություններ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում, որոնք սահմանեցին, որ համայնքը և Երևան համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ են:

Այս լրացումը, սակայն, որևէ փոփոխություն նշված սուբյեկտների թե՛ քաղաքացիաիրավական, թե՛ վարչաիրավական կարգավիճակում չհանգեցրեց:

Ընդ որում, ՀՀ սահմանադրության 2015թ.-ի բարեփոխումների հայեցակարգում որևէ նշում չկա թե ինչ է իրենից ներկայացնում «հանրային իրավունքի իրավաբանական անձը» և ինչ առանձնահատկություններ ունի: Որևէ այդպիսի բացատրություն չկա նաև «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների վերոնշված փոփոխությունների հիմնավորումներում:

Այս տեսակետից անհրաժեշտ է քննադատական վերլուծության ենթարկել թե՛ նշված տերմինի բովանդակությունը, թե՛ նաև դրա ներդրման արդյունավետությունը:

Մյուս կողմից առկա է անհրաժեշտություն հստակեցնելու Հայաստանի Հանրապետության և համայնքների՝ քաղաքացիական շրջանառության մասնակցության տրամաբանությունը:

Խորհրդային Միությունում տնտեսական հարաբերությունների կարգավորումը ենթադրում էր դիրեկտիվ պլանավորում, ինչպես նաև արտադրության միջոցների և հողի մասնավոր սեփականության արգելում: Անկախության ձեռքբերումից հետո ՀՀ-ն անցավ մյուս ծայրահեղության՝ ըստ էության վերացնելով պետության որևէ տեսակի մասնակցությունը ձեռնարկատիրական հարաբերություններին, բացառությամբ հարկաբյուջետային, մրցակցային, սպառողների իրավունքների պաշտպանության և մի շարք այլ նեղ ոլորտների: Պետք է նաև նշել, որ ՀՀ-ում նախկին ԽՍՀՄ երկրների համեմատ տեղի ունեցավ պետական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և սովտնտեսությունների պատկանող հողակտորների ամենալիբերալ և ամենաարագ մասնավորեցումներից մեկը:

Այս տեսակետից պետք է քննարկել պետության հարաբերությունները և դերը նեղ քաղաքացիաիրավական տեսակետից մասնավոր, սակայն հանրային մեծ կարևորություն ունեցող սուբյեկտների հետ՝ հանրային ծառայություններ մատուցող առևտրային իրավաբանական անձինք, տնտեսության համար մեծ նշանակություն ունեցող առևտրային իրավաբանական անձինք (խոշոր մթերողներ, խոշոր արտադրողներ, խոշոր արտահանողներ, գերիշխող, մենաշնորհ դիրք գրավող կազմակերպություններ), սոցիալական մեծ նշանակություն ունեցող ոչ առևտրային իրավաբանական անձինք (Հայ Առաքելական Եկեղեցի, Գիտությունների

ազգային ակադեմիա): Գաղտնիք չի, որ այս բոլոր սուբյեկտների հետ բազում, այդ թվում՝ իրավաբանական խնդիրներ են ծագում պրակտիկայում:

Հեղինակը կատարել է հետաքրքիր, խորը, համապարփակ հետազոտություն: Հետազոտությունն իրականացնելիս ուսումնասիրվել է մեծածավալ գրականություն: Աշխատանքում առկա են բազմաթիվ արժեքավոր հետևություններ, մտահանգումներ և տեղեկություններ:

Մասնավորապես, պարագրաֆ 1.1-ում հեղինակն ուսումնասիրում է հանրային իրավունքի իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը տալիս է հանրային իրավունքի իրավաբանական անձի հասկացության հիմնական հատկանիշները՝ համապատասխան նորմատիվ իրավական ակտով համ դրա հիման վրա հիմնադրված լինելը, հանրային-իրավական կազմավորում լինելը, կազմակերպական միասնություն ունենալը, պատասխանատվություն կրելը հնարավորությունը և այլն:

Պարագրաֆ 1.2-ում քննարկվում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակներն արտասահմանյան երկրներում: Հեղինակը մասնավորապես վերլուծում է Ֆրանսիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Վենեսուելայի, ԱՄՆ, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի օրենսդրությունները: Արդյունքում, հեղինակը նշումն է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները գրեթե բոլոր երկրներում տարբեր են, և դրանք ազգային համակարգում ներառելիս չպետք է մեխանիկորեն փոխառել:

Պարագրաֆ 2.1-ում ներկայացվում է պետությունը որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ: Հեղինակը նշում է, որ արդյունավետ չէ պետությանը դիտարկել որպես քաղաքացիական իրավունքի հատուկ տեսակ: Հեղինակը նաև քննարկել է պետության և դրա մարմինները փոխհարաբերությունները:

Պարագրաֆ 2.2-ում խոսք է գնում ՀՀ կենտրոնական բանկի որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի մասին: Հեղինակը եզրակացնում է, որ ՀՀ կենտրոնական բանկը ոչ միայն դասական իմաստով հանրային իշխանությամբ օժտված և որոշակի ֆինանսավարկային լիազորություններ իրականացնող կազմակերպություն է: Դա, ըստ հեղինակի, թույլ է տալիս միանշանակ պնդել, որ այն հանդես է գալիս որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Պարագրաֆ 2.3-ում հեղինակը քննարկում է վարչատարածքային միավորները որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ: Այս պարագրաֆում հեղինակը հիմնավորում է, որ վարչատարածքային միավորները նույնպես հանդիսանում են հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Պարագրաֆ 2.4-ում նկարագրվում են բյուջետային հիմնարկները որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ: Հիմնավորվել է, որ բյուջետային հիմնարկները նույնպես պետք է դասվել հանրային իրավունքի իրավաբանական անձանց շարքին:

Պարագրաֆ 2.5-ում հեղինակը քննարկում է որոշ հատուկ ոչ առևտրային կազմակերպությունների տեսակներ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ դիտարկելու հարցը: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը նշում է, որ նման կազմակերպությունները՝ ՀՀ նոտարական պալատը և ՀՀ փաստաբանների պալատը պետք է համարել հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Պարագրաֆ 3.1-ում հեղինակը ներկայացնում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց իրավասուբյեկտությունը և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության որոշ առանձնահատկությունները: Հեղինակը նշում է, որ պետության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ քաղաքացիական իրավահարաբերություններում այն, հետևելով իր առաքելությանը, իրացնում է սոցիալական գործառույթներ: Նրա քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ մտնելը պայմանավորված է հասարակական պահանջով և ուղղված է հանրային շահի բավարարմանը: Հետևաբար, պետությունն ունի միայն այն քաղաքացիական իրավունքները, որոնք անհրաժեշտ են այն նպատակների հասնելու համար, որի համար ինքը գոյություն ունի, որն էլ հենց հատուկ իրավասուբյեկտությունն է:

Պարագրաֆ 3.2-ում քննարկվում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվությունը: Հեղինակը նշում է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են ինքնուրույն գույքային պատասխանատվություն, իսկ պետությունը, ինչպես նաև համայնքը պատասխանատու են հանրային իրավունքի իրավաբանական անձանց պարտավորություններով, եթե հանրային իրավական կազմավորումը չի ապացուցի այդ սուբյեկտների ինստիտուցիոնալ և օպերատիվ անկախությունը:

Աշխատանքի ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ հեղինակը կատարել է ավարտուն աշխատանք՝ իրականացնելով լայնածավալ հետազոտություն, օգտագործելով տեսական, պրակտիկ բազմաթիվ նյութեր: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի կողմից հրապարակված ութը գիտական հոդվածներում: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացված աշխատանքին:

Այնուամենայնիվ, կարծում եմ, ատենախոսության մեջ առկա են առանձին վիճելի եզրակացություններ: Ցանկանում եմ հեղինակի ուշադրությունը հրավիրել դրանց.

1. Շատ կարևոր է ի նկատի ունենալ, որ իրավաբանական անձ տերմինի տակ տարբեր լեզուներով, տարբեր իրավակարգերում և տարբեր ժամանակներում տարբեր երևույթներ են ընկալվել: Երբեմն իրավաբանական անձ ասելով տարբեր երկրների իրավաբաններն ի նկատի են ունենում արհեստական անձին, կամ որոշակի ֆիկցիա, որով մարդ չհամարվող գոյությունը դիտարկվում է որպես մարդու նման իրավունքներ ունեցող:

Հանրային իրավունքի իրավաբանական անձ տերմինը օգտագործում է Գերմանիայի 1896թ.-ի քաղաքացիական օրենսգիրքը: Մասնավորապես, Օրենսգրքի 89-րդ հոդվածը նշում է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք պատասխանատու են իրենց աշխատողների և մարմինների պատճառված վնասների համար 31-րդ հոդվածի կանոններով (միավորումների մարմինների և աշխատողների պատասխանատվություն):

Պետք է հիշել, որ 19-րդ դարի վերջում, երբ գրվում էր Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը, «իրավաբանական անձ» եզրույթն ուներ շատ ավելի լայն ընկալում և, փաստացի, ներառում էր ֆիզիկական անձ չհամարվող և իրավունակությամբ օժտված ցանկացած սուբյեկտի: Այդ իսկ պատճառով և՛ Ֆրանսիայում, և՛ Գերմանիայում պետությունը դիտարկվում է որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ: Այսինքն, Գերմանիայում նման հասկացության կիրառման նպատակը հենց պետության որպես քաղաքացիական հարաբերությունների մասնակցի դիտարկումն է: Այդ իսկ պատճառով Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի 89-րդ

հողվածում խոսքը գանձապետարանի մասին է, որը ծառայում էր որպես միջանկյալ օղակ քաղաքացիական հարաբերություններում պետության մասնակցությունը միջնորդավորելու և ապահովելու համար:

Բայց արդեն նախորդ դարի կեսերից «իրավաբանական անձ» եզրույթի տակ իրավաբանները սկսեցին հասկանալ միայն կորպորատիվ անձին: Դրա հետ մեկտեղ տարբեր երկրների օրենսդրությունները սկսեցին ճանաչել հենց պետության առանձին քաղաքացիաիրավական իրավասուբյեկտությունը՝ թույլ տալով վերջինիս անմիջականորեն մասնակցել քաղաքացիաիրավական հարաբերություններին՝ առանց հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ գանձապետարանի դիմակի տակ թաքնվելու անհրաժեշտության: Այս տեսակետից, «Հանրային իրավունքի իրավաբանական անձ» եզրույթը ժամանակակից քաղաքացիական իրավական համակարգ ունեցող երկրներում, որտեղ «իրավաբանական անձ» հասկացությունն ավելի նեղ ընկալում ունի, կարելի է դիտարկել որպես անախրոնիզմ:

2. Հանրային գործառույթներ իրականացնող սուբյեկտների պարագայում իսկապես առկա են խնդիրներ: Դրանց մի մասը նկարագրվել են հենց հեղինակի կողմից: Սակայն հարց է ծագում՝ ինչ հարց է լուծելու հանրային իրավունքի իրավաբանական անձ տերմինի ներդրումը:

Նույնիսկ, եթե ընդունվի հանրային իրավունքի իրավաբանական անձանց վերաբերյալ առանձին նորմատիվ իրավական ակտ, այն լավագույն դեպքում լինելու է միայն համապատասխան օրենքներին հղումներ պարունակող փաստաթուղթ: Ճիշտ է՝ ձևական-տեսական մակարդակում մենք կունենանք հստակություն՝ կլինի հանրային իրավունքի իրավաբանական անձ առանձին կազմակերպաիրավական ձև, սակայն գործնականում բացի օրենսդրական կարգավորումները ծանրաբեռնելուց ոչ մի պրակտիկ արդյունք չի լինի:

Օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ անելիս պետք է սկզբից վերհանել առկա խնդիրը: Իսկապես, վարչական հարաբերությունների սուբյեկտային կազմի կարգավորությունների առումով առկա են որոշակի խնդիրներ՝ օրենսդրությունը վարչական մարմին չի դիտարկում փաստացի հանրային պատվիրակված գործառույթ իրականացնող անձանց, առկա են խնդիրներ հիմնարկների կարգավորումների հետ և այլն:

Այս խնդիրների երկու լուծում կարելի է պատկերացնել՝

1-ին. Ճյուղային օրենքներում կատարել համապատասխան կարգավորումներ՝ տեսական մակարդակում ընդունելով, որ համապատասխան սուբյեկտներն ուղղակի առանձնահատուկ՝ sui generis իրավաբանական անձինք են, որոնք այդպիսի առանձնահատուկ կարգավիճակ ունեն, քանի որ իրենց գործառույթներն են առանձնահատուկ.

2-րդ. ընդունել հանրային իրավունքի իրավաբանական անձանց վերաբերյալ օրենսդրական ակտ, որում նախատեսել հանրային իրավունքի իրավաբանական անձանց շարքը, բայց միևնույն է նշելով, որ այդ սուբյեկտների հարաբերությունները կարգավորվելու են հատուկ օրենսդրական ակտերով:

Իսկապես, բացի ընդհանուր գծերից դժվար է գտնել նմանություններ ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ նոտարական պալատի միջև. ուստի հանրային իրավունքի իրավաբանական անձանց վերաբերյալ ունիվերսալ կարգավորումները լինելու են շատ ընդհանուր, և այդ իսկ պատճառով որևէ հարցի լուծում չեն տալու:

Նշված ուղղությամբ գնացել է Վրաստանի Հանրապետությունը, որի քաղաքացիական օրենսգրքի 1509-րդ հոդվածը պետությունը դիտարկում է որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ: Բացի դրանից, Վրաստանում նաև ընդունվել է «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին» օրենքը, որը փաստացի իրենից ներկայացնում է միայն հղող նորմերով հագեցած իրավական ակտ. դրա բոլոր հոդվածները հղում են անում հատուկ օրենքներին:

Այս տեսակետից ավելի արդյունավետ է համապատասխան խնդիրներին անդրադառնալ կետային, ճյուղային օրենքներում, իսկ հանրային իրավունքի իրավաբանական անձի վերաբերյալ քննարկումները թողնել տեսական մակարդակում, ինչպես իրականում արված է այդ թվում եվրոպական երկրներում: Հարկ է նշել, որ նույնիսկ Գերմանիայում առկա չէ հանրային իրավունքի իրավաբանական անձանց վերաբերյալ ընդհանուր իրավական ակտ, իսկ բոլոր հարցերը տեսական մակարդակում են քննարկվում և ունեն բանավիճային բնույթ:

3. Հեղինակը ճիշտ է նշում, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները գրեթե բոլոր երկրներում տարբեր են, և դրանք ազգային համակարգում ներառելիս չպետք է մեխանիկորեն փոխառել: Կարծում եմ, ավելի արդյունավետ կլինեք վերհանել մեր երկրի առջև ծառացած խնդիրները: Այս տեսակետից, կան հանրային կարևորություն ունեցող մի շարք

սուբյեկտներ, որոնց կարգավիճակը էականորեն փոփոխվում է վերջին ժամանակներում տեղի ունեցող օրենսդրական փոփոխություններով: Խոսքը, մասնավորապես, Գիտությունների ազգային ակադեմիայի մասին է, որը նախկինում *sui generis* իրավաբանական անձ է, այժմ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ստացել է հիմնադրամի կարգավիճակ:

4. Հեղինակը քննարկել է հանրային իրավունքի իրավաբանական անձի շրջանակներում միայն հանրային գործառույթներ իրականացնող սուբյեկտներին՝ բաց թողելով հանրային նշանակություն ունեցող նեղ իմաստով մասնավոր սուբյեկտներին, օրինակ՝ հանրային ծառայությունները մատուցող կազմակերպություններ, տնտեսության և հանրության համար մեծ նշանակություն ունեցող կազմակերպություններ, պետական մասնակցությամբ առևտրային իրավաբանական անձինք: Պետք է նշել, որ այս պահին առկա չէ համընդհանուր իրավական բազա, որը կքննարկեր պետության կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման, պետական մասնակցությամբ կազմակերպությունների գործունեության սկզբունքները: Որոշակի, ընդ որում՝ երբեմն հակասական, կարգավորումներ առկա են «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքներում: Սակայն դրանք նկարագրում են գուտ ընթացակարգային հարցեր, բայց չեն կարգավորում պետության գործառույթների տեսակետից մասնակցության հարցը:

Վերը նշված դիտողություններն, այնուամենայնիվ, կրում են մեթոդաբանական, բանավիճային բնույթ, և ամենևին չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Սիրո Հրաչի Ամիրխանյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձինք՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» կետ 7-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական,

առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՄ՝

Ա.Ա. Թավադյան

Դոցենտ, ի.գ.թ.

08.12.2025թ.

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Աշոտի Թավադյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
ղեկանի տեղակալ



Ա.Հ. Պետրոսյան